Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2008 թվականի մայիսի 7-ի N234Ա որոշմամբ

«ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

1. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Լիցենզավորված անձ) լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ բոլոր գնումները պարտավոր է իրականացնել իր կողմից հաստատված գնումների կարգի համաձայն: Գնումների կարգը պետք է համապարփակ նկարագրի գնումների գործընթացի իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգերը: Լիցենզավորված անձը պարտավոր է իր կողմից հաստատված գնումների կարգը ներկայացնել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով և հետագայում իրազեկել դրանում կատարված փոփոխությունների ու լրացումների մասին:
2. Լիցենզավորված անձը գնումների իրականացման ընթացքում պետք է ապահովի, պաշտպանի, խրախուսի ազատ և բարեխիղճ մրցակցությունը:
3. Լիցենզավորված անձը գնումներ կատարելիս պարտավոր է միջոցներ ձեռնարկել գնումների գործընթացում հնարավորինս մեծ թվով մասնակիցների ներգրավելու համար՝ բացառելով այնպիսի որակավորման չափանիշների ու բնութագրերի, գնումների այնպիսի տեսականու, քանակների ու պատվերի կատարման այնպիսի ժամկետների սահմանումը, որոնք կրում են խտրական բնույթ, ստեղծում են հակամրցակցային միջավայր կամ սահմանափակում են մրցակցությունը՝ անտեղի խոչընդոտելով կամ սահմանափակելով որևէ անձի գնումներին մասնակցելու իրավունքը:
4. Լիցենզավորված անձը գնումներ կատարելիս պարտավոր է անկողմնակալ և միանման վերաբերմունք հանդես բերել գնումների գործընթացին մասնակցելու ցանկություն ունեցող բոլոր անձանց նկատմամբ:
5. Լիցենզավորված անձը գնումների գործընթացին մասնակցող անձանց ներկայացրած տվյալները պետք է համարի հավաստի, քանի դեռ հակառակը չի ապացուցել:

6. Այլ հավասար պայմաններում Լիցենզավորված անձը պարտավոր է գերակայություն տալ տեղական արտադրողներին, մատակարարներին, աշխատանքներ կատարողներին և ծառայություններ մատուցողներին:
7. Լիցենզավորված անձը պարտավոր է արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկողմնակալորեն քննության առնել գնումների գործընթացին մասնակցող ցանկացած անձի բողոք՝ այդ անձանց նախապես տեղեկացնելով իր գործողությունների բողոքարկման ընթացակարգերի մասին: Լիցենզավորված անձը պարտավոր է այդ անձանց տեղեկացնել, որ իր գործողությունները կամ անգործությունը կարող են բողոքարկվել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովում:
8. Լիցենզավորված անձը պարտավոր է փաստաթղթավորել գնումների գործընթացի հետ կապված իր բոլոր որոշումները և գործողությունները: Նման փաստաթղթերը պետք է պահպանվեն առնվազն 3 տարի ժամկետով:
9. Լիցենզավորված անձը պարտավոր է կատարված գնումների մասին սահմանված ձևերին համապատասխան հաշվետվություն ներկայացնել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով: